Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահի
2008 թվականի
03.04 թիվ 1/304Լ

## ԿԱՐԳ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ, ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ, ԲԱՇԽՄԱՆ ԵՎ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետև` Կենտրոնական բանկ) կողմից պարբերականների պատրաստման, հաստատման, հրատարակման, բաշխման և թարգմանության կարգը: Պարբերականների պատրաստումը, հաստատումը և հրատարակումն իրականացվում է համաձայն ենթահավելված 1-ի:
2. Կենտրոնական բանկի կառուցվածքային ստորաբաժանումները հրատարակվող պարբերականների` իրենց կողմից մշակված բաժինները կամ բաժինների պատրաստման համար անհրաժեշտ տեղեկատվությունը պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում են ներկայացնում ենթահավելված 1-ով նախատեսված ժամկետներում:
3. Կենտրոնական բանկի յուրաքանչյուր ծառայող, որը պարբերականի նախագծի վերաբերյալ ունի առաջարկություններ կամ դիտողություններ, կարող է դրանք գրավոր ներկայացնել պարբերականը կամ դրա մի մասը մշակած համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը:
4. Պարբերականներում ընդգրկված նյութերը Կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվելուց և համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից խմբագրվելուց հետո համաձայնեցվում (վիզավորվում) են այդ նյութերը պատրաստելու համար պատասխանատու կառուցվածային ստորաբաժանման, ինչպես նաև տվյալ ոլորտը կոորդինացնող Կենտրոնական բանկի խորհրդի անդամի կողմից ենթահավելված 1-ով նախատեսված ժամկետներում:

5. Պարբերականների վերաբերյալ գրախոսություններն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի 2001 թվականի ապրիլի 11-ի թիվ 264 հրամանով հաստատված «ՀՀ կենտրոնական բանկի գրախոսման ենթակա հրատարակումների, գրախոսելու իրավասություն ունեցող հաստատությունների

ցանկի, գրախոսության տրամադրման ժամկետների, գների և պայմանների սահմանման վերաբերյալ ուղեցույցի համաձայն:
6. Կենտրոնական բանկի տեղեկատվական համակարգերի կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումը հրատարակումից հետո պարբերականները զետեղում է Կենտրոնական բանկի ինտերնետի «Տնային էջում» ենթահավելված 1-ում սահմանված ժամկետներում:
7. Պարբերականների հայերեն տարբերակների բաշխումն իրականացնում է Կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի գծով պատասխանատու ստորաբաժանումը, իսկ անգլերեն տարբերակների բաշխումը` Կենտրոնական բանկի արտաքին կապերի գծով կառուցվածքային ստորաբաժանումը:
8. Պարբերականները բաշխվում են համաձայն ենթահավելվածներ 2-ով, 3-ով և 4-ով սահմանված ցանկերի:
9. Պարբերականների բաշխումն իրականացնելու նպատակով Կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի գծով պատասխանատու ստորաբաժանումը պահեստից ստանում է պարբերականների որոշակի պաշար:
10. Կենտրոնական բանկի գործերի կառավարչությունը ապահովում է պարբերականների հրատարակումը` ծախսերը կատարելով Կենտրոնական բանկի վարչական ծախսերի համապատասխան հոդվածով:
11. Կենտրոնական բանկի պարբերականներից հինգ օրինակ ՀՀ ԿԲ Գործերի կառավարչության Հրատարակչական բաժնի կողմից և 2 օրինակ ՀՀ ԿԲ գրադարանավարի կողմից ստացվում և պահվում են որպես անձեռնամխելի պաշար:
12. Պարբերականների թարգմանությունը կատարելու նպատակով Կենտրոնական բանկի պարբերականների թողարկման համար պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը համապատասխան նյութերը հանձնում է Կենտրոնական բանկի արտաքին կապերի գծով պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանում` անգլերեն և ռուսերեն թարգմանության:
13. Կենտրոնական բանկի յուրաքանչյուր շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար նշանակում է ստորաբաժանման աշխատակիցներից առնվազն մեկին, որն օժանդակում է պարբերականի կամ դրա համապատասխան մասի թարգմանությունն իրականացնող թարգմանչին:
14. Թարգմանության իսկությունը հաստատվում է Կենտրոնական բանկի արտաքին կապերի գծով պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի և թարգմանության համար պատասխանատու աշխատակցի (աշխատակիցների) կողմից:
15. Պարբերականների անգլերեն և ռուսերեն տարբերակները պատրաստվում և Կենտրոնական բանկի ինտերնետի «Տնային էջում» տեղադրվում են ենթահավելված 5-ով սահմանված կարգով և ժամկետներում:
16. Պարբերականները թողարկվում են ենթահավելված 6-ով սահմանված տպաքանակով:
17. Կենտրոնական բանկի խորհրդի անդամները և ստորաբաժանման ղեկավարները կարող են պարբերականների հավելյալ օրինակներ դուրս գրել պահուստից, իսկ այլ սուբյեկտներ կարող են դրանք ձեռք բերել Գործերի կառավարչությունից Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ սահմանված գնով:

Հավելված

«Ենթահավելված 1

Կենտրոնական բանկի պարբերականների հայերեն տարբերակների պատրաստման, հաստատման և հրատարակման ժամկետները

| | Նյութի կամ նյութի համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրում հավետվության կամ ծրագրի պատրաստման համար պատասխանատու ստարաբաժանմանը | Նյութի ներկայացում Կենտրոնա-կան բանկի վարչություն-ներին (վարչության նիստին) | Նյութի ներկայացում Կենտրոնական բանկի խորհրդի նիստին և որոշման կայացում | Փոփոխությունների կատարում և ներկայացում պարբերականների թողարկման համար պատասխանատու ստորաբաժանմանը | Խմբագրում | Վիզավոր ում | Տպագրում | Նյութի տեղադրում «Տնային էջում» |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ ԿԲ «Տեղեկագիր» | Համաձայն «ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության և այլ ստորաբաժանումների ու Վիճակագրության վարչության բաժինների միջև տեղեկատվության փոխանակման» կարգի, տվյալները տրամադրվում են Վիճակագրության վարչությանը մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 25-րդ օրը: | Հավելվածները ներկայացվում են ՀՀ ԿԲ վիճակագրակա ն տվյալների տարածման հանձնաժողովի հաշվետու ժամանակաշրջ անին հաջորդող ամսվա հերթական նիստի հաստատմանը: | | Հաստատմանը հաջորդող երկու օրվա ընթացքում: | Հաստատ-մանը հաջորդող երրորդ օրը: | Հաստատ-մանը հաջորդող երրորդ օրը: | Վերջնական խմբագր-մանը հաջորդող 10-րդ օրը: | Վերջնական խմբագր-մանը հաջորդող 2-րդ օրը: |
| ՀՀ ԿԲ «Բանբեր» (ժամկետները չեն վերաբերում «Վերլուծական նյութերին», ՀՀ արտաքին պահուստներին և ԿԲ հաշվեկշռին) | | Հաշվետու եռամսյակին հաջորդող 2-րդ ամսվա 1-ին շաբաթվա ընթացքում տրվում է շահագրգիռ ստորաբաժանումներին | Կենտրոնական բանկի խորհրդին ներկայացվում է 2-րդ ամսվա 2-րդ շաբաթվա ընթացքում (նիստի շաբաթ չլինելու դեպքում գումարվում է արտահերթ խորհրդի նիստ) | Խորհրդի նիստում ընդունվելուց հետո 1 օրվա ընթացքում | Ստանալուց հետո 10 օրվա ընթացքում | Խմբագրու մից հետո 1 օրվա ընթացքու մ | Վիզավորում ից հետո 1 շաբաթ | Վերջնական վիզավորման ը հաջորդող 1 օրվա ընթացքում (հայերեն) |
| ՀՀ ԿԲ «Բանբերի» «ՀՀ արտաքին պահուստներ» և «ԿԲ հաշվեկշիռ» բաժինները | | Հաշվետու եռամսյակին հաջորդող 2-րդ ամսվա 1-ին կամ 2-րդ վարչության նիստին | Կենտրոնական բանկի վարչության նիստին հաջորդող խորհրդի նիստին (մինչև հաշվետու եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 28-ը) | Խորհրդի նիստում ընդունվելուց հետո 3 օրվա ընթացքում | | | | |
| «ՀՀ դրամավար- | | | Պարբերականի | | Ստանալուց | Խմբագրու | Վիզավորում | Վերջնական |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| կային քաղաքականութ-յան ծրագիր», «Գնաճի հաշվետվություն» | | | «Դրամավարկային քաղաքականության ծրագիր» մասը հաստատվում է խորհրդի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացումից հետո 10 օրվա ընթացքում, իսկ «Գնաճի հաշվետվություն» մասը խորհրդին ներկայացվում է հաշվետու եռամսյակից հետո 2-րդ ամսվա 2-րդ շաբաթվա ընթացքում (նիստի շաբաթ չլինելու դեպքում գումարվում է արտահերթ խորհրդի նիստ) | | հետո 7 օրվա ընթացքում | մից հետո 2 օրվա ընթացքում | ից հետո 1 շաբաթ | վիզավորման ը հաջորդող 1 օրվա ընթացքում (հայերեն) |
| «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն» (ժամկետները չեն վերաբերում «ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն» բաժնին) | | Մարտի առաջին նիստին | Կենտրոնական բանկի վարչության նիստից 2 շաբաթ հետո | Կենտրոնական բանկի խորհրդի 2-րդ ընթերցում` ապրիլի առաջին շաբաթ | Մինչև ապրիլի 27-ը | Մինչև ապրիլի 30-ը | Մինչև մայիսի 1-ը | Վերջնական վիզավորման ը հաջորդող 3 օրվա ընթացքում |
| «ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվության» «ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն» բաժին | | | Կենտրոնական բանկի խորհրդին ներկայացվում է մինչև ապրիլի 1-ը` վերջին խորհրդի նիստին (նիստի շաբաթ չլինելու դեպքում գումարվում է արտահերթ խորհրդի նիստ) | | | | | |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» | Մինչև փետրվարի վերջ ԿԲ Վիճակագրության, Ֆինանսական վերահսկողության, Իրավաբանական և Վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչությունը տեղեկատվություն է տրամադրում Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչությանը | Մարտի առաջին նիստին | Կենտրոնական բանկի վարչության նիստից հետո 2 շաբաթ | Կենտրոնական բանկի խորհրդի նիստից եռօրյա ժամկետում տեքստը տրվում է պարբերականների թողարկման համար պատասխանատու ստորաբաժանմանը | Ստանալու պահից 7 օրվա ընթացքում | Խմբագրվելուց հետո 2 օր | Վիզավորումից հետո 1 շաբաթ | Վերջնական վիզավորումը հաջորդող 2 օրվա ընթացքում |
| «ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագիր» | Մինչև ապրիլի 10-ը Դրամավարկային քաղաքականության, Վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչությունները տեղեկատվություն են տրամադրում ՎՎ-ին | ապրիլի 3-րդ նիստին | Կենտրոնական բանկի վարչության նիստին հաջորդող նիստին | Կենտրոնական բանկի խորհրդի նիստից հետո 1 շաբաթ | Ստանալու պահից 1 շաբաթ | Խմբագրվելուց հետո 3 օր | Վիզավորումից հետո 1շաբաթ | |
| «Ֆինանսական կայունության հաշվետվություն» | Մինչև մարտի 10-ը ԿԲ Վիճակագրության, Դրամավարկային քաղաքականության, Ֆինանսական, և Վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչությունը տեղեկատվություն է տրամադրում Ֆինանսական համակարգի քաղաքականության ու վերլուծությունների վարչությանը | Ապրիլի առաջին նիստին | Կենտրոնական բանկի վարչության նիստից հետո 2 շաբաթ | Կենտրոնական բանկի խորհրդի նիստից մեկշաբաթյա ժամկետում տեքստը տրվում է պարբերականների թողարկման համար պատասխանատու ստորաբաժանմանը | Ստանալու պահից 7 օրվա ընթացքում | Խմբագրվելուց հետո 2 օր | Վիզավորումից հետո 1 շաբաթ | Վերջնական վիզավորումը հաջորդող 2 օրվա ընթացքում |

»

Ենթահավելված 2

Կենտրոնական բանկի պարբերականների հայերեն տարբերակների բաշխման ցանկ

| | | Կենտրո-նական բանկի տեղե-կագիր | Կենտրո-նական բանկի բանբեր | Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը | Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն | Կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր | ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիր, Գնաճի հաշվետվություն | Ֆինանսական կայունության հաշվետվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | ՀՀ տարածքում գործող բանկեր և վարկային կազմակերպություններ | 43 | 43 | 43 | 43 | 43 | 43 | 43 |
| 2. | ՀՀ տարածքում գործող ապահովագրական ընկերություններ | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 | 10 |
| 3. | Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա | | | 1 | 1 | | | 1 |
| 4. | Հայաստանի ֆոնդային բորսա | | | 1 | 1 | | | 1 |
| 5. | Կենտրոնական բանկի ստորաբաժանումներ | 38 | 36 | 48 | 51 | 33 | 36 | 48 |
| 6. | Բանկային քոլեջ | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 7. | Հայաստանի բանկերի միություն | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 8. | ՀՀ նախագահի աշխատակազմ | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 9. | ՀՀ կառավարության մամուլի և հասարակայնության հետ կապերի վարչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 10. | ՀՀ Ազգային ժողով | 6 | 6 | 6 | 156 | 6 | 156 | 6 |
| 11. | ՀՀ Վերահսկիչ պալատ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 12. | ՀՀ Ազգային ժողովի գրադարան | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 13. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2 | 2 | 2 | 10 | 2 | 2 | 2 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 14. | ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 15. | Երևանի պետական համալսարան | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 16. | Երևանի պետական տնտեսագիտական համալսարան | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 17. | Կառավարման ինստիտուտ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 18. | Հայաստանի ազգային գրադարան | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 19. | ՀՀ գրապալատ | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 20. | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրադարան | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| 21. | Համաշխարհային բանկի արտակարգ և լիազոր ներկայացուցչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 22. | Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներկայացուցչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 23. | Արժույթի միջազգային հիմնադրամի հայաստանյան ներկայացուցչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 24. | Միջպետական բանկի հայաստանյան ներկայացուցչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 25. | Զարգացման հայկական գործակալություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 26. | Լրատվական գործակալություններ | 4 | 4 | 4 | 25 | 4 | 4 | 4 |
| 27. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 28. | ՀՀ արդարադատության նախարարություն | 2 | - | - | - | - | - | - |
| 29. | ՀՀ Հարկային պետական ծառայություն | 1 | 1 | - | 1 | - | 1 | - |
| 30. | Հայ-Եվրոպական տնտ.քաղ. և իրավական խորհրդատվ. կենտրոն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 31. | Հայաստանի KfW-ի ներկայացուցիչ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 32. | «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն» | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 33. | ՀՀ Առևտրի և տնտեսական զարգացման Նախարարություն | | 2 | | 2 | | 2 | 2 |
| | Գերմանա-հայկական հիմնադրամ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | Պահուստ | 11 | 13 | 12 | 27 | 9 | 13 | 20 |

Ենթահավելված 3

Կենտրոնական բանկի պարբերականների անգլերեն տարբերակների բաշխման ցանկ

| | | ԿԲ տարեկան հաշվետվություն | ԿԲ վիճակագրական տեղեկագիր | Ֆինանսական կայունության հաշվետվություն | ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիր, Գնաճի հաշվետվություն | Հայաստանի ֆինասական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողություն |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | Աշխարհի կենտրոնական բանկեր և վերահսկողական մարմիններ | 95 | 95 | 95 | | 150 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | ՀՀ տարածքում գործող ֆինանսական կազմակերպություններին | | | 53 | 53 | |
| 3. | Հայաստանի բանկերի միություն | 2 | 1 | 2 | 1 | |
| 4. | ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | 2 | 2 | 2 | 2 | |
| 5. | ՀՀ Ազգային ժողովի գրադարան | 2 | 2 | 2 | 2 | |
| 6. | ՀՀ նախագահի աշխատակազմ | 2 | 1 | 2 | 1 | |
| 7. | Երևանի պետական համալսարան | 2 | 1 | 2 | 1 | |
| 8. | Երևանի պետական տնտեսագիտական համալսարան | 2 | 1 | 2 | 1 | |
| 9. | Հայաստանի ամերիկյան համալսարան | 1 | 1 | 1 | 1 | |
| 10. | Ռուսական համալսարան | 1 | 1 | 1 | 1 | |
| 11. | Հայաստանի ազգային գրադարան | 2 | 2 | 2 | 2 | |
| 12. | ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գրադարան | 2 | 2 | 2 | 2 | |
| 13. | ՀՀ գրապալատ | 2 | | 2 | | |
| 14. | Կենտրոնական բանկի գրադարան | 2 | 2 | 2 | 2 | |
| 15. | Բանկային քոլեջ | 2 | 2 | 2 | 2 | |
| 16. | Միջպետական բանկ | 1 | 1 | 1 | 1 | |
| 17. | Արժույթի միջազգային հիմնադրամ | 2 | 2 | 2 | 2 | |
| 18. | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ | 1 | 1 | 1 | 1 | |
| 19. | Միջազգային ֆինանսական կորպորացիայի ներկայացուցչություն | 1 | 1 | 1 | 1 | |
| 20. | Համաշխարհային բանկ | 2 | 2 | 2 | 2 | |
| 21. | ՀՀ-ում օտարերկրյա դեսպանություններ | 22 | 22 | 22 | 22 | |
| 22. | ՀՀ արտաքին գործերի նախարարություն | 28 | | 28 | 28 | |
| 23. | Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ | 1 | 1 | 1 | 1 | |
| 24. | Bank of International Settlements | 1 | 1 | 1 | 1 | |
| 25. | UN, Economic Commission for Europe | 1 | 1 | 1 | 1 | |
| | Պահուստ | 11 | 15 | 18 | 9 | |

Ենթահավելված 4

Կենտրոնական բանկի խորհրդին, ստորաբաժանումներին Կենտրոնական բանկի պարբերականների բաշխման ցանկ

| N | Ստորաբաժանման անվանումը | Տեղեկագիր | Բան-բեր | Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողություն | ԿԲ տարեկան հաշվետվություն | ԿԲ վիճակագրական տեղեկագիր | ՀՀ դրամավարկային քաղաքականության ծրագիր, Գնաճի հաշվետվություն | Ֆինանսական կայունության հաշվետվություն |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կենտրոնական բանկի խորհուրդ | | | | | | | |
| 01 | Կենտրոնական բանկի նախագահ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 02 | Կենտրոնական բանկի նախագահի տեղակալ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 03 | Կենտրոնական բանկի խորհրդի անդամներ | | | | | | | |
| | 03.1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | 03.2 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 1 |
| | 03.3 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | 03.4 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| | 03.5 | 1 | 1 | 1 | 2 | 1 | 1 | 1 |
| 04 | Կանխիկ դրամով գործառնությունների վարչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 05 | Կենտրոնական բանկի վերստուգիչ խումբ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 06 | Կենտրոնական բանկի աշխատակազմ | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 07 | Կենտրոնական բանկի մամուլի ծառայություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 08 | Դրամավարկային քաղաքականության վարչություն | 2 | 5 | 1 | 6 | 2 | 5 | 1 |
| 09 | Վճարային համակարգերի և դրամաշրջանառության կարգավորման վարչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 10 | Վիճակագրության վարչություն | 6 | 6 | 1 | 6 | 6 | 6 | 1 |
| 11 | Հաշվապահական հաշվառման վարչություն | 1 | 1 | 1 | 3 | 1 | 1 | 1 |
| 12 | Տնտեսական հետազոտությունների վարչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 13 | Ֆինանսական վերահսկողության վարչություն | 1 | 1 | 5 | 1 | 1 | 1 | 5 |
| 14 | Գործառնական վարչություն | 1 | | 1 | 1 | | | 1 |
| 15 | Իրավաբանական վարչություն | 4 | | 1 | 2 | | | 1 |
| 16 | Ֆինանսական համակարգի քաղաքականության և վերլուծությունների վարչություն | | | 15 | 5 | | | 15 |
| 17 | Տեղեկատվության և տեխնիկական միջոցների պաշտպանության վարչություն | | | | | | | |
| 18 | Գործերի կառավարչություն | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 | 5 |
| 19 | Ֆինանսական վարչություն | 1 | 1 | 1 | 3 | 1 | 1 | 1 |
| 21 | Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչություն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 23 | Ֆինանսական դիտարկումների կենտրոն | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 | 1 |
| 25 | Կենսաթոշակային բարեփոխումների նախապատրաստման խումբ | | | | | | | |
| 26 | Անձնակազմի կառավարման վարչություն | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 | 2 |
| | Ընդամենը | 38 | 36 | 48 | 51 | 33 | 36 | 48 |

Ենթահավելված 5

**Կենտրոնական բանկի պարբերականների անգլերեն և ռուսերեն* տարբերակների պատրաստման և հրապարակման ժամկետները**

| | Նյութի ներկայացում թարգմանության | Թարգմանության ժամկետ | Պատասխանատու ստորաբաժանման կողմից թարգման-ված տարբերակ-ների խմբագրում | Թարգմանության համար պատասխանատու ստորաբաժանման կողմից վերանայում | Հրատարակչական աշխատանքներ և տպագրում | «Տնային էջում» տեղադրման ժամկետ |
|---|---|---|---|---|---|---|
| 1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր» | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրը | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրվանից 2 շաբաթվա ընթացքում | Թարգմանված տարբերակը ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | Խմբագրված տարբերակը ստանալուց 2 օրվա ընթացքում | Վիզավորումը հաջորդող 3 օրվա ընթացքում | Վերջնական վիզավորմանը հաջորդող 1 օրվա ընթացքում |
| 2. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի բանբեր» | Հայերեն տարբերակը տպագրության | Հայերեն տարբերակը տպագրության | Թարգմանված տարբերակը | Խմբագրված տարբերակը | Վիզավորումը հաջորդող | Վերջնական վիզավորմանը |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | հանձնման օրը | հանձնման օրվանից 4 շաբաթվա ընթացքում | ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | ստանալուց 3 օրվա ընթացքում | 4 օրվա ընթացքում | հաջորդող 1 օրվա ընթացքում |
| 3. «Հայաստանի Հանրապետության Դրամավարկային քաղաքականության ծրագիր», «Գնաճի հաշվետվություն» | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրը | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրվանից 4 շաբաթվա ընթացքում | Թարգմանված տարբերակը ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | Խմբագրված տարբերակը ստանալուց 4 օրվա ընթացքում | Վիզավորմանը հաջորդող 15 օրվա ընթացքում | Վերջնական վիզավորմանը հաջորդող 1 օրվա ընթացքում |
| 4. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն» | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրը | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրվանից 4 շաբաթվա ընթացքում | Թարգմանված տարբերակը ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | Խմբագրված տարբերակը ստանալուց 5 օրվա ընթացքում | Վիզավորմանը հաջորդող 30 օրվա ընթացքում | Վերջնական վիզավորմանը հաջորդող 1 օրվա ընթացքում |
| 5. «Հայաստանի ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրը | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրվանից 4 շաբաթվա ընթացքում | Թարգմանված տարբերակը ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | Խմբագրված տարբերակը ստանալուց 5 օրվա ընթացքում | Վիզավորմանը հաջորդող 15 օրվա ընթացքում | Վերջնական վիզավորմանը հաջորդող 1 օրվա ընթացքում |
| 6. «Ֆինանսական կայունության հաշվետվություն» | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրը | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրվանից 4 շաբաթվա ընթացքում | Թարգմանված տարբերակը ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | Խմբագրված տարբերակը ստանալուց 5 օրվա ընթացքում | Վիզավորմանը հաջորդող 15 օրվա ընթացքում | Վերջնական վիզավորմանը հաջորդող 1 օրվա ընթացքում |
| 7. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր» | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրը | Հայերեն տարբերակը տպագրության հանձնման օրվանից օրվանից 4 շաբաթվա ընթացքում | Թարգմանված տարբերակը ստանալուց 1 շաբաթվա ընթացքում | Խմբագրված տարբերակը ստանալուց 5 օրվա ընթացքում | Վիզավորմանը հաջորդող 15 օրվա ընթացքում | Վերջնական վիզավորմանը հաջորդող 1 օրվա ընթացքում |

* Պարբերականների ռուսերեն տարբերակները տեղադրվում են միայն ԿԲ տնային էջում:

Ենթահավելված 6

**Պարբերականների թողարկման տպաքանակը**

| Պարբերականների թողարկման անվանումը | | Տպաքանակը |
|---|---|---|
| 1 | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տեղեկագիր | 150 |
| 2 | Հայաստանի հանրապետության կենտրոնական բանկի բանբեր | 150 |
| 3 | Հայաստանի ֆինանսական համակարգը, զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը | 160 (հայերեն)<br>150 (անգլերեն) |
| 4 | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություն | 360 (հայերեն)<br>190 (անգլերեն) |

| | | |
|---|---|---|
| 5 | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վիճակագրական տեղեկագիր | 140 (հայերեն)<br>160 (անգլերեն) |
| 6 | Հայաստանի Հանրապետության դրամավարկային քաղաքականության ծրագիր, Գնաճի հաշվետվություն | 300 (հայերեն)<br>140 (անգլերեն) |
| 7 | Ֆինանսական կայունության հաշվետվություն | 170 (հայերեն)<br>250 (անգլերեն) |